44. ԴԸՆԳՅՈ

Կէլնի, չէլնե մեյ խատ իրիկ, մեյ խատ կընիկ: Էսւս իրիկ կընիկ շատ աղքյատ կէլնին:

Էսա մարթն ի, զըմեն օր կէրթա ծով ծյուկ կպըռնի, ամաև ծովուց ծյուկ կառնի որ գյա տուն, մեյ խատ յաեուտիմ կուգյա, էսւս մարթու դիմաց, փարա կուտա էսա մարթուն, ծեռնեն ծյուկ կառնի:

Ավուր մեկ էսա մարթու կընիկն ի, կասի. - Քյա մարթ, ասպած քյո տուն ավիր չանի, էսա կանդար օր կէրթաս ծյուկ պըռնել, մեկ օր շենքով-շնողքով ծյուկըմ չպիրիսիր ուտենքյ:

Մարթն ի, կասի. - Կընիկ, ես ի՞նչ անեմ, զըմեն օր որ կէրթամ, առատմե չում իրիկուն կչարչըրվիմ, մեյ խատ ծյուկ կպըռնեմ, էն էլ կառնիմ որ պիրիմ տուն, մեյ խատ յահուտիմ կա, կուգյա իմ սառն, փարա կուտա, ես էլ էտա ծյուկ կուտամ ինոր:

Կընիյն ի, կասի. - Էսօր պարկենդանքյ ի, չէլնիմ չիմանամ ծյուկ ծախիս: Առ պե, մեյ խատ տապկենքյ, խավասով ուկենքյ:

Մարթն ի, կառնի ուր ծրկան թոռ, կէրթա ծովու ափ: Առատմե չուր իրիկուն չարալամիշ կէլնի, ջեորով մեյ խատ ծյուկ կպըռնի, կառնի որ գյա տուն: Ճամբախ էսա յահուտին գյենա կուգյա էսւս մարթու սառն, փարա կուտա կասի. - Էտա ծյուկ ծախի զիկ:

Մարթն ի, կասի. - Էսօր որ խազար ոսկի էլ տաս էսւս ծրկան, չեմ իտա: Էսօր պարկենդանքյ ի, ես պիտի էսա ծյուկ տանիմ տուն, տապկենքյ ուտենքյ:

Յահուտին ի, ինչ լեզու որ կթափըցուցի, ի՛նչ կանդար որ փարա կուտա, էսա մարթ ուր ծյուկ չի տաս: Կառնի դռորի կտանի տուն: Կընգյան կասի. - Կընի՛կ, էսօր քյո խաթրի խամար ծյուկ չծախեցի, յահուտին են կանդար աղաչանքյ ինգյավ, չտրվեցի:

Էսա կընիյն ի, կպիրի էսա ծրկան փոր կճրղի որ սերսըփին, տապկեն: Կտիսնա, որ ծրկան փորիս մեյ խատ պըզտիկ ոսկի թասըմ կուգյա տյուս:

Էսա մարթն ի, որ էսա ոսկի թաս կտիսնա՝ շատ կուրախանա,

համաձ կընգյաձ ծեռնեն կառնի, կասի. - Կընդի՛կ, էսա ինչ խորոտ թաս ի, ես էսա թասով մեյ խատ ճյուր պիտի խըմեմ:

Մարթն ի, թաս կմտուցի մեչ ճըրին սերսուփըմ կլըվա, ճյուր կլըսի, կխըմի: Խեստ որ ճյուր կխըմի կպըոծընի, կտիսնա, որ թաս իլին ճյուր կէլնի: Ճյուր կխըմի՝ թաս իլին ոսկի կէլնի:

Մարթն ի, որ էսա պաձ կտիսնա, կասի. - Կընդի՛կ, մեր կըսմաթ աստված խասուց, ամաձ փերեն խասուց: Էլ մառախ մ'ասնե, ըստըրիս ուտենքյ, խըմենքյ, խեստ մեր քյեֆին ֆըոանքյ:

Ավուր մեկ էսա իրիկ-կընդիկ մեյտեղ կընայեր ին մեյ խատ ուրիշ գյեղըմ, ուրենց պարեկմոչ տուն: Տառնալու գյախ ըսկում շո՛ք էր, ըսկում շո՛ք էր, որ իսաձ կգյեժըներ:

Բիրդաձ կտիսնաձ մարթըմ, որ մեյ խատ դընգյ տըրեր ի վեր թեին, էն դիխեն կուգյա: Ամաձ ըսկուն ի քյընտրընի, ըսկուն ի քյընտրընի որ, մեչ ուր քյընտրընքյին խեխտրըվեր ի:

Կընդիյն ի, որ էսա մարթու քյընտրինքյ կտիսնա, մեյ խատ կծընծղա, կասի. - Քյա սև կապիմ, էսա խորած մարթ էսա կեսորվաձ շիքին ո՞ր տեղեն կուգյա, խեստ էսա հալին, հալա՛ էնա դընգյն էլ տըրեր ի վեր թեին:

Էսա մարթն ի, խեստ որ կմոտոնա իրիկ-կընդյաձ, կասի. - Աստված որ կսիրեքյ, մեյ խատ ենեպյուրըմ զիկ շանց տվեքյ, ես ծարավ լալկըվա: Ես էսա թարաֆ ըսկի չիմ իկի, ճար-ճամբախ չիմ կիտի:

Մարթն ի, որ էսա մարթուն կտիսնա, ուր տիժուր կուգյա, կասի. - Կայնի ախպե՛ր, քյե ճյուր տամ խըմի:

Էսա մարթն ի, խեստ որ ճըրի անուն կլըսի, ուրախութենե խելքյ կէրթա: Համա շոտրըմ կինի էսա մարթու ոտ, կասի. - Ամա՞ն, ախպեր, ես քյո բախտն իմ ընգյե, խոգյի կազատես:

Մարթն ի, կխանի ուր ծոցից ոսկի թաս, մեչի ոսկին կտառտրըկի, կուտա էսա մարթուն ծեռ:

Մարթն ի, թաս կառնի, կիրիշկա որ գյեռ ճյուր կա մեչ, կխըմի: Կտիսնա որ ի՞նչ. էտա թասի ճյուր ըսկում պաղ ի, ըսկում անուշ ի, որ ինքյ մեչ ուր կենաց ըսըսկընա անուշ ճյուր չէր խըմե: Ճյուր կխըմի, կպըոծնի կտիսնա, որ թաս կէլնի իլին ոսկին:

Թասի տերն ի, մարթու ծեռնից թաս կառնի, մեչի ոսկին կտառտրըկի կուտա մարթուն, կասի՝ ա՛ռ, մեկ էլ խըմի:

Մարթն ի, կառնի թաս, մեկել կխըմի, կիրիշկա որ թաս գյեռ էլմ'էլ իլին ոսկի էլավ:

Էսա մարթն ի, որ էսա թասի մարիֆաթ կտիսնա, խելքյ կէրթա, կասի. - Ա՛յ ախպեր, արի տյու աղեկութենմ' արա զիկ: Իմ աչկ մընաց մեչ էսա թասին, արի ես տյու բազառմ' անենքյ. տյու էսա թաս տու զիկ, ես էլ դընգյ կուտամ քյե:

Թասի տերն ի, կասի. - Այ մա՛րթ, տյու ծու՞ն ես, ես էսա թաս ի՞նչխ փոխիմ խեստ էտա փեստե դընգյին:

Մարթն ի, կասի. - Ես քյո թասի մարիֆաթ տեսա, աման տյու իմ դընգյի մարիֆաթ չիս տիսե:

Թասի տերն ի, կասի. - Տահա աղեկ որ տյու կասիս, տյու իմ թասի մարիֆաթն տիսար, դե ասա խենքյ քյո դընգյի մարիֆաթն ի՞նչ ի, որ տյու զիկ կասիս, արի խետ քյո թասին փոխենքյ:

Մարթն ի, կասի. - Իմ դընգյի մարիֆաթ կիտե՞ս ինչ ի, որ քյե տյուշմամ՝ էլնի, էսա դընգյ տընիս գյետին, ասես. «Դընգյո, պոչընտ գյետին, գյընլոխտ մեչ տյուշմընիս գյընլսուն»՝ էլ քյե դավի չընկա, են ինքն ուր կէրթա քյո տյուշմընին տարմադաղան կանի, էլմ՝էլ կդառնա ետ, կուգյա մուր քյե:

Թասի տերն ի, որ էսա ասսն կլընսի, մեյ խապտ կինքյ ուր տուշմիշ կէլնի, կտառնա կասի. - Շատ աղեկ, քյանի որ քյո աչկն ընգյավ իմ թասին, արի փոխենքյ:

Թասի տերն ի, թաս կուգա՝ դընգյ կառնի, կտընի վեր ուր թեին կընտորմ տեղ կառաճանա, կտառնա դընգյ կտընի գյետին, կասի. - Դընգյո՛, էսա մարթ որ կա՝ իմ տյուշմանն ի, ախընր իմ թասն առիս, կընաս, Դընգյո՛ քյե տիսնամ, պոչընտ գյետին, գյընլոխտ մեչ տյուշմընիս գյընլսուն:

Դընգյն ի, համան սընխկ-դընխկ, կէրթա մեյ խապտ ընսկում կայիմ կզարկի մեչ ուր խին տիրոչ գյընլսուն, որ կգյեժընսկուցի, կտառնա ետ՝ մոտ ուր տեր:

Մարթն ի, կէրթա կկայնի վեր դընգյի տիրոչ գյընլսուն, թաս ծոցիս կխանի, կտընի ուր ծոց, կասի. - Քյընի՛, քյընի՛, իմ ախպեր, խորս քյուն քյընիս, տյու էտա ախմախ խելքովտ կուգիր զիկ խապիլ ա:

Մարթն ի, կտառնա ուր կընգյան կասի. - Քյելի՛, կընիկ, քյելի՛ էրթանքյ, աստված մե իտուր, աման տերին իտուր: Ընտընրիս թաքավորն էլ ուր ասքյընրով որ գյա՝ էլ մեր թաս չի կանա մեր ծեռնեն առնե:

Մարթն ի, որ էսա կասի, դընգյ կտընի վեր ուր թեին, կինի ճամբախ, կէրթա:

Իրիկ-կընիկն ին, շատ կէրթան, քիչ կէրթան, աստված կիտի: Կնեղանան, ծառիմ խովի տակ կնընտին: Կտիսնան որ են դիխեն մարթըմ կուգյա, կտորըմ սիվտակ կաշի հընթի տակ զարկուկ:

Էսա մարթն ի, որ կխասնի էսա իրիկ-կընգյան մոտ, կասի. - Ամա՜ն, ծեր բախտն իմ, ծեր աստընծուն, ծարվութնե էլ զիկ կանդամ չընկա քյելիմ, տյուքյ չեք կիտի ընտեղեր ո՞րտեղ ախպյուր կա, ես կարիբ իմ, ճարճամբախ չիմ կիտի:

Մարթն ի, իտոր որ կտիսնա, տիժար կուգյա, կասի. - Նընտի ախպե՛ր, նընտի, ես քյե ճյուր կուտամ խընմես:

Մարթն ի, որ ճընի անուն կլընսի, համան կնընտի իսոնց կուշտ՝ ծառի խովի տակ:

Էսա մարթն ի, ուր ծոցիս ոսկի թաս կխանի, մեչի ոսկիքյ կտառդընկի կուտա էսա մարթուն, կասի՝ ա՛ռ խընմի:

Մարթն ի, թաս կառնի կխըմի, կտիսնա, որ էտա ճյուր ըսկում պաղ ի, ըսկում անուշ ի՝ որ տյու կասես գյեռ աբուհայաթի ճյուրն ի: Ճյուր խըմելուց սորա կտիսնա, որ թաս էլավ իլին տեղին ոսկի:

Թասի տերն ի, մարթու ծեռնից թաս կառնի, ոսկին կտառտըկի ուր ջեռ, թաս կուտա էսա ծարավ մարթուն, կասի՝ առ, մեկել խըմի:

Մարթն ի, թաս կառնի, մեկել ճյուր կխըմի: Կտիսնա որ էլմ'էլ թաս կէլնի իլին ոսկի: Վեր էսա թասին շատ կզարմանա, կտառնա էսա թասի գիրոչ կասի. - Ախպեր, քյե պամ' ասեմ, չընեղանաս: Արի էտա թաս տու զիկ, ես էլ էսա սուֆրեն տամ քյե:

Թասի տերն ի, կասի. - Ախպեր, տյու ծըռիր իս, ի՞նչ իս, ես էսա թաս ի՞նչխ տամ էտա կաշու կտորըն առնիմ: Տյու խաց պի, ես վեր գյեստնին էլ կանամ ուտե, սուֆրա ի՞նչ անիմ: Աման տես որ իմ թաս չէլներ, տյու ծարվութեն չէր կանի քյելե:

Սուֆրի տերն ի, կասի. - Ախպե՛ր, քյե մեռնիմ, ընչի՞ կպարկանաս: Տյու իմ սուֆրի մարիֆաթ չես տեսի, մեյ խատ էլ տյու իմ սուֆրի մարիֆաթ տես, որ պանիտ էկավ՝ կտոխիս, որ պանիտ չէկավ, տյու քյո տեղ սաղ, ես իմ տեղ սալամաթ:

Թասի տերն ի, կասի. - Տահա աղեկ՝ որ տյու կասես: Տյու իմ թասի մարիֆաթ տեսար, ըստրրիս էլ տյու քյո սուֆրի մարիֆաթ շանց զու՝ խենքյ:

Սուֆրի տերն ի, սուֆրեն կտրընի գյեստին, մեյ խատ կանաչ ճրպոտովըմ կզարկի վեր էսա սուֆրին, կասի. - Սուֆրայե Տամբ-տամբ, ես քյեզնից կուզիմ, տյու՝ ասստրծուց:

Մարթն ի, որ էսա պան կասի, բիրդան սուֆրեն կպացվի, վերեն էլ՝ ինչ որ լեզյուտ կկըտրի կա: Ի՞նչ տեսակ անուշ-անուշ կերակուրներ, տաթլիներ որ կասես, բիթիւն ճեռկ-ճեռկ մեչ ոսկի թաբախներաց լըցուկ:

Սուֆրի տերն ի, կասի. - Դե ախպե՛ր, ես կիտեմ, մկա անոթի եքյ, մոտացեքյ, ասստրծու տրվածից մեյտեդ ուտենք, խըմենք:

Իրիկ կընիյն ի, որ էսա պան կտիսնան, ուրենց պերան կմընա պաց: Կմոտենան սուֆրին, կբաշլայեն խաց ուտիլ: Աման էտա անտեր կերակուրներաց անուշ խոտից բիլա կկըշտանան: Որ խաց կուտեն կպրռծնեն, սուֆրի տերն ի, մեյ խատ էլ կանաչ ճրպոտ կզարկի վեր էսա սուֆրին, կասի. «Սուֆրայե Տամբ-տամբ, ես քյեզնից շյուքր իմ, տյու՝ ասստրծուց: Սուֆրեն ի, կծալվի վերվի, կերակուրներ կվերցվեն, էլմ'էլ կմընա մեյ կտոր կաշի:

Սուֆրի տերն ի, կասի. - Էյ ախպե՛ր, մկա տյու էլ իմ սուֆրի մարիֆաթ տեսար: Ի՞նչ կասիս, քյո թաս խետ իմ սուֆրեն կփոխե՞ս, թե՝ չէ:

Թասի տերն ի, կասի. - Ախպե՛ր, վալա, քյեզնից պախիմ, ասստրծուց ի՞նչխ պլախիմ, քյո աչկ ինչխ որ մընացեր ի մեչ իս թասին, իմ աչկըն էլ ըսկուն մընացեր ի մեչ քյո սուֆրին, դե պե փոխենքյ:

Սուֆրի տերն ի, համան շոտմ ուր սուֆրեն կուտա, էսա թաս կառնի,

կտրնի ուր ծոց, ուրախ-ուրախ կինի ճամբախ: Սեյ դեխեն էլ մեչ ուր մըտուց կասի. «Վապա՛, խապեցի որ խապեցի, իմ սուֆրեն, աղորթ որ մարիֆաթ ուներ, աման ինոր մարիֆաթ մենակ գյեռ էն խացն էր, էսա թասի պան բաշկա յի. թե պըստիկ ի՝ մարթ ուր ծոցի մեչ կպախի, ըսկի մարթ չիմնու, համ թե՝ մեչ ապուհայաթի ճյուր կա, որ ուզածտ գյախ կխըմիս, համ թե՝ հըմեն ճյուր խըմելուն էլ մեյ թաս ոսկի կլըցես ջեռբտ, էն ոսկով էլ ուզածտ կերակուր առ կե, աշխար կերակուր մի չըկա. վա՜յ ախմախ մարթ, վա՜յ չուր խսապեցի, խոգյիս էկավ պերանս»:

Թասի տերն ի, սուֆրեն որ առեց՝ ծալեց, իտուր կընգյան, ասաց. - Առ կընի՛կ, մե էսա սուֆրեն էր պակաս, էն էլ էլավ: Էլ թաքավոր վի՞ր շուն ի: Վա՜յ ախմախ մարթ, վա՜յ, իրիշկա տես հալա ինչ ուրախ-ուրախ էլ կքյելի, ուր էն էշ խելքյով իմ թաս պիտի տանի վայելի:

Թասի տերն ի, էսա ասելուն պես դընգյ ուր թնի վերվեն կառնի տակ, կտրնի գյետին, կասի. «Դընգյո՜, ախըր իմ թաս տարա՜ն է. էսա պան տյու կաբյուլ կանի՞ս, որ ես կաբյուլ անիմ: Էլ մեչ աշխըրիս ես իմ թաս տարող մարթուց զատ՝ վո՞վ ունեմ տյուշման: Դընգյո, քյե մեռնիմ, ախըր տյու կիտես՝ պոչըտ գյետին, գյըլեռխտ մեչ տյուշմընիս գյըլխին»:

Դընգյոն ի, տիրոչ էսա խաբար լըսելուն պես, համան սըխկ-դըխկ կինի ճամբախ, կէրթա կխասնի թաս տարողին, համան մեյ խատ ըսկում կույիմ կզարկի մեչ իսոր գյըլխուն, որ կգյեժըռցուցի, կիսկի գյետին:

Թասի տերն ի, համան շոտրմ կխասնի, մարթու ծոցիս ուր թաս կխանի, կտրնի ուր ծոց, մեյ խատ կիրիշկա էսա մարթուն, կտիսնա որ փըռփուռ տրվե վեր պերնին, կասի. - Իմ ախպեր դըդում, ինչի փըռփըռուցեր իս, ապա տյու ի՞նչ կասիր: Մունջ իմ թաս պիտի առնիր տանիր, մանգյար դի՞ր ենքյ»:

Մարթն ի, կտառնա ուր կնգյան կասի. - Կընի՛կ, դե քյելի էրթանքյ, էլ կայնելու գյախ չի, էն թող ինչ կանդար կուզի՝ քյընի, խորս քյունն էլ որ քյընի՝ հալա ուր քիչ է, երբ որ ակխի, խելքյ կուգյա գյըլեռխ, էլ մեկել ըսկուն ախմախութեն չանի:

Էսա իրիկ-կընիկն ին գյընա կինեն ճամբախ կէրթան: Շատ կէրթան քիչ կէրթան, աստվուծ կիտի, էլմ'էլ կնեղանան, ծառիմ տակ կնըստեն, սուֆրեն կպանան, մարթն ի, ճըպոտ կզարկի վեր սուֆրին, կասի. «Սուֆրայե Տամբ-տամբ, ես քյեզնիս կուզեմ, տյու՝ աստրծուց»:

Սուֆրեն ի, կպացվի, վերեն խազար պարին լըցուկ: Էսա իրիկ կընիկ կբաշլայեն մեյ դեխեն ուտել, մեյ դեխեն ծրծղալ, քյեֆ անել:

Մարթն ի, կասի. - Վալա, կընիկ, քյանի որ էսա մե կա՝ էլմ'էլ աշխըրիս դարդ չունենքյ, աման մենք էլ իսոնց տերվանքյներաց պես ախմախութեն չանենքյ, թե ոսկին պեղ ի, էլնենքյ քյեռշկ-սարա շինենքյ, զալըմ անենքյ, ընչի որ զանգյին մարթուն տյուշման շատ կէլնի, մենքյ մկա ինչխ ենք, էլմ'էլ մընանքյ ըսկուն, ուտենքյ-խըմենքյ, մեր քեֆն իրիշկանքյ, ըսկուն որ մարթ չիմնա:

Իրիկ կընիկն են, էսասկընա խարար տալու գյախ, կտիսնան որ էն դեխեն մեյ խատ մարթըմ գյեռ տրդում գյըրկե վեր սրռտին կուգյա, աման ինքյ ուր քյըռտինքյ խառվե իրար:

Էսա մարթն ի, կուգյա որ մոտախասնա թե չէ՝ մարթն ի, շոտմ ճրպոտ կզարկի վեր սուֆրին, կասի. «Սուրայե Տամբ-տամբ, ես քյեզնից շյուքյր եմ, տյու՝ աստրծուց»:

Սուֆրեն ի, էսա խաբար լսելուն պես՝ կծալվի, վերվի կերակուրներն էլ կվերցրվին՝ կմնա մեյ կըտոր կաշի:

Էսա մարթն ի, կուգյա կխասնի էսա իրիկ-կընգյան, ուր տրդում կտրնի գյետին, ուր ճակտի քյըռտինքյ կսըրպի, կասի. - Աման, ծե բախտն իմ՝ ծեր աստրծուն, ծարվութնե լալկըվեր իմ, էլ կադամ չրկա քյելեմ, տյուքյ չեքյ կիտե ըստեխրանքյ ո՞րտեղ ճյուր կա, ես կարիբ եմ, էսա ճար-ճամբախ չիմ կիտե:

Իրիկ կընիյն են, որ կտիսնան էսա մարթու հալ՝ ուրենց տիժար կուգյա, կասեն. - Ախպեր մառախ մ'անե, նըստի մենքյ քյե ճյուր կուտանքյ, ինչ կանդար կանաս՝ խըմի:

Տրդմի տերն ի, որ էսա պան կլըսի, համան կնըստի: Թասի տերն ի, ուր ծոյից թաս կխանի, մեչի ոսկիքյ կտառտրկի, թաս կպարզի էսա մարթուն, կասի. - Առ ախպե՛ր, առ քյե ճյուր խըմի:

Մարթն ի, թաս կառնի, ճյուր կխըմի, կզարմանա. ճյուր մ'ասե, ապուհայաթ, ըսկում որ պաղ ի, ըսկում որ անուշ ի: Ճյուր կխըմի թե չէ՝ կտիսնա. որ թաս կելնի իլին ոսկի:

Թասի տերն ի, թաս էսա մարթու ծեռնեն կառնի, ոսկին կտառտրկի կնգյան փեշ, թաս էլմ'էլ կուտա էսա մարթուն, կասի. - Առ ախպե՛ր, մեյ խատ էլ խըմի, ես կիտեմ տյու մեկ թասով չկըշտացար:

Մարթն ի, թաս կառնի, մեյ խատ էլ կխըմի, կտիսնա, որ թաս էլմ'էլ կելնի իլին ոսկի: Շատ կզարմանա, կտառնա էսա թասի տիրոջ կասի. - Ախպե՛ր, քյե պամ' ասիմ՝ չնեղանաս, արի իմ տրդում տամ քյե, քյո թաս տու զիկ:

Թասի տերն ի, որ էսա պան կլըսի, մեյ խատ կծրծղա, կասի. - Ախպե՛ր, տյու ծու՞ռ իս, ախըր էսա թաս, ի՞նչխ կելնի, որ ես խեստ էտա տրդմին փոխիմ: Տրդում առնիմ՝ անեմ ի՞նչ, փարա չունի՞մ, որ զիկ տրդում լազըմ էլնի՝ չե՞մ կանա առնի:

Տրդմի տերն ի, կասի. - Ախպեր, քյե մեռնեմ, ընչի՞ կպարկանաս, տյու իմ տրդմի մարիֆաթ չես տեսի: Մեյ խատ էլ տյու իմ տրդմի մարիֆաթ տես, որ պանիդ էկավ՝ կտոխես, որ պանիդ չէկավ, տյու քյո տեղ սաղ, ես իմ տեղ սալամաթ:

Թասի տերն ի, կասի. - Շատ աղեկ, էն աղեկ, որ տյու կասես, տյու իմ թասի մարիֆաթ տեսար, ըստրրիս էլ տյու քյո տրդմի մարիֆաթ զիկ շանց տուր խենքյ:

Տրդմի տերն ի, կասի. - Ախպե՛ր, իմ տրդմի մարիֆաթ կիտե՞ս ինչ ի. որ էսա տրդմի պոչ դեխ աչ էօլեորես սար-քար սև ասքյրրով

կծուծկըվի, բիթուն էլ սև ծիյավոր, ամր անիս թե չէ՝ աշխար կկոռծանես. որ դեխ ծախ էօլեորես, բիթուն էլ կկուրիսեն:

Թասի տերն ի, որ էսա պան կլըսի, կասի. - Շատ աղեկ, դե պե փոխենքյ:

Տըդմի տերն ի, համան շոտրըմ տըդում կտրնի էսա մարթու առաճ, իսոր ծեռնեն թաս կառնի, կտրնի ուր ծոյ, կայ պարև կանի, ուրախ-ուրուխ կինի ճամբախ կէրթա: Մեյ դեխեն մեչ ուր մըտայ կասի. «Վապա, խապեցի որ խապեցի, էսա քըսան տարի էր, որ տրդում գյորկեր ի, վեր սըռտիս ման կուգյի, ըսկի զիկ լազըմ չէր էլե, աման էաս թաս որ կա՝ լազաթ կուտա, թե ճյուրն ի՝ կխըմեմ, թե ոսկին ի՝ պեոլ-պեոլ կխըոջիմ»:

Թասի տերն ի, տըդում առնելուց սորա ուր կընգյան կասի. - Կընգինկ, կընգինկ, իրիշկա տես՝ հալա ինչ ուրախ-ուրախ կվագի: Ուր էշ խելքյով զիկ խապես, իմ թաս պիտի տանի ուտի:

Համան շոտրըմ ղընգյ կտրնի գյեստին, կասի. - Դընգյո՛, ախըր իմ թաս տարան է՞, էսա պան տյու կաբյուլ կանի՞ս, որ ես կաբյուլ անեմ: Էլմ'էլ աշխարըրիս ես վո՞վ ունիմ գիկ տյուշման, իմ տյուշման որ կա՝ իմ թաս տարողն ի: Դընգյո՛, քյե մեռնիմ, պոչըտ գյեստին, գյլոխտ մեչ տյուշմընիս գյըլխուն:

Դընգյոն ի, տիրոչ էսա խաբար լսելուն պես, համան շոտրըմ սըխկ-դընխկ կէրթա, մեյ խատ ըսկում կայիմ կզարկի մեչ էսա թաս տարողի գյըլխուն՝ որ կխեռըլյուցի, կիսկի գյեստին:

Թասի տերն ի, համան կվազի էսա մարթու ծոցից ուր թաս կխանի, կտրնի ուր ծոյ, կծրծդա, կասի. - Ե՞յ ախմախ սարասքյար, տյու քյո էտա զապիթի էշ խելքյով պիտի իմ թաս առնիր տանիր, մանգյար դո՞ր ինքյ, իմ թաս մանգյար անտեր ի:

Մարթն ի, դընգյ կտրնի վեր թևին, տըդում կզարկի ուր հյունթ, կնգյան կասի. - Կընգինկ, տե շոտ արա սըռ էլենքյ էրթանքյ էլ մե պան չմընայ պակաս, մեկ ասքյարն էր պակաս, որ էլնի թաքավոր: Մեռնիմ իմ աստրծուն, էն էլ էկավ, էլ ի՞նչ մառախ կանես:

Իրիկ կընգինկն ին, ուրախ-ուրախ կինեն ճամբախ, կէրթան ուրենց տուն:

Գյարնան թարաֆ, ավուր մեկ իրիկ կնգյան կասի. - Կընգինկ, էլի էրթանքյ յայլա, հաքի որ մեր խայն էլ, մեր ճյուրն էլ, մեր ասքյարն էլ խետ մե ի, մենքյ որ չէրթանքյ յայլա, ապա էլ վո՞վ էրթա:

Իրիկ կընգինկն ին, կէլնին քյանիմ գյազ կըտավ կառնին խետ ուրենց դընգյին, տրդմին, սուֆրին էնան թասին, կինին ճամբախ, կէրթան:

Շատ կէրթան, քիչ կէրթան, կխասնին թաքավորու քյեռշկ-սարի տիմաց. մեյ խատ ճի՞չ չայիր-չիմնիմ մեչ, պաղ ախպըրի գյըլոխ, կնըստին:

Իրիկն ի, կէլնի քյանիմ խատ փետ կզարկի գյեստին, ուրենց կըտավ կվրոռի վեր էտա փետերաց, կանի չատրը ուր տրդում, դընգյ էնան

սուֆրեն կկախի էտա փեստերաց մուրեն, կնըստին: Քյանիմ օր ըսըսկընա կնըստին էստեղ՝ կուրին, կխըմին:

Ավուր մեկ էսա մարթու քյեֆ տեղ կէլնի, կէլնի ուր կընգյան կասի. - Կընիկ, հաքյի աստված մե տըվեր ի, արե էսօր մեյ խատ մեր թաքավորուն կանչինքյ տավաթ:

Կընիյն ի, կասի. - Տյու կիտես:

Մարթն ի, կէլնի դոդրի կէրթա թաքավորու քյեռշկ-սարեն, կուգի մըտնիլ ներս:

Թաքավորու խալայեղներն ին, որ կտիսնան էսա ճաթ խալվընեռով մարթ, չեն թողնի մըտնի ներս. կխառցուցին կասին. - Ի՞նչ կուգա:

Մարթն ի, կասի. - Ես էկեր եմ, որ մեր թաքավորուն կանչեմ մեր չատրը տավաթ:

Թաքավորու խալայեղներն ին, որ էսա պան կլըսին, կուտան վեր էսա մարթուն ծաղր, կասին՝ ծուռ ի: Կտրըտին, կմըլին տյուս:

Մարթն ի, տեռ-տեռշման կդառնա եր, կէրթա չատրը:

Կնիյն ի, կասի. - Մա՛րթ, թաքավորուն տեսա՞ր, կանչեցի՞ր:

Մարթն ի, կասի. - Կընի՛կ, էլ՝ մի խառցուցի, ես կընացի որ թաքավորուն կանչի տավաթ, ինոր խալայեղներ տըվեցին վեր զիկ ծաղր, ասիցին՝ ծուռ ի, զիկ տըտեցին, մըլեցին տյուս:

Կընիյն ի, կասի. - Դան՝ չընկա, թող վեր քյե ծընծղան, տյու առատուն մեկել կընա:

Մարթն ի, էն մեկել օր առատուն՝ էլմ՝էլ կէլնի կէրթա: Ինչ լեզու որ կթափըցուցի, թաքավորու խալայեղներ չին թողնե մըտնի ներս: Էն եա կզոռի, կմըտնի ներս, խալայեղներ տըտելով թարանջից կքյաշեն տակ, տըոնից կմըլեն տյուս:

Թաքավորն ի, ուր էոդի տենջարից էսա պան որ կտիսնա, ամր կանի ուր վազիրին կասի. - Կընա, էնա մարթուն առ, պե վեր՝ խենքյ ինչ կուզի:

Վազիրն ի, կուգյա էսա մարթուն կառնի, կտանի թաքավորու առճև:

Թաքավորն ի, էսա մարթուն կխառցուցի, կասի. - Ասա խենքյ, այ մարթ, ի՞նչ կուզիս, քյո դարտն ի՞նչ ի:

Էսա մարթն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, փառքյ աստըծու, ես մեչ աշխընրքյին դարտ չունիմ, իմ դարտն են ի, որ մեյ խատ իմ թակավոր գյա մեր չատրը տավաթի, ես կուզիմ իմ թակավորուն իքյրամ անեմ:

Թաքավորն ի, որ էսա պան կլըսի, մեյ խատ կծընծղա, կդառնա ուր վազիրին կասի. - Էս մարթ ծուռ ի, էլի քյանիմ խատ ոսկի տու՝ թող թողնի էրթա:

Վազիրն ի, մեյ քյանիմ խատ ոսկի կուտա էսա մարթուն, կասի. - Առ տա՛ր, քյե խաց առ, թաքավորու ջանին տալա արա:

Էսա մարթն ի, որ կտիանա վազիր ոսկի կուտա ուրեն, համան վազիրի ծեռաց ոսկին կառնի, կտրտի գյեստին, կպարկանա, կասի. - Քյո կոտն ուտի քյո ոսկին, մանգյար ես աղքյա՞տ իմ:

Կասի, կթողնի կէլնի գյուս:

Էն մեկել օր էսա մարթ գյընա կուգյա կուզի մըտնիլ ներս՝ թաքավորու քյեռշկ-սարին:

Թաքավորու խալայեղներն ին գյընա էսա մարթուն դըմըշկելով կխանեն գյուս: Վարիսսլի, էսա մարթ օր քյանիմ դիր ըսըսկընա կուգյա կերթա:

Ավուր մեկ թաքավոր ուր վազիրին կասի. - Էսա ծուռ մե ռազիլ արաց, էսօր մեյ խապ գյաղտիկ մարթ Էորոխկի՝ տես էսարա չատըր դի՞ր ի, էնարա չատըրի տակ ի՞նչ կա, ի՞նչ չըկա...

Էն մեկել օր վազիրն ի, ուր խալվըներ կփոխի, մեյ խատ խեղճ մարթում խալավ կխայնի, կինի ըզդեխ, ընդեխ ֆռալ: Կերթա կկայնի էսա մարթու չատըրի առճև, կտիսնա որ ի՞նչ. գյեռ մեյ քյանիմ խատ ցից զարկե գյետին, մեկ-երկու գյազ կտավ փըռե վեր էտա ցըցերաց, մեյ խապ դընգյ, մեյ խապ տրդում, մեյ խատ էլ սուֆրա կա ցըցերից կախուկ, ուրիշ պան չըկա:

Վազիրն ի, կդառնա ետ, թաքավորուն կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես կընացի էտա մարթու չատըր տեսա. քյանիմ գյազ կըտավ վըռե վեր քյանիմ խատ ցըցի, չատըրի տակն էլ զատ չըկա, մեյ խատ տրդում, մեյ խատ դընգյ, մեյ խատ էլ սուֆրա կա էտա ցըցերաց կախուկ, մեյ խատ էլ ճաթ լաթով կընիյմ նըստե էտա տեղ, էլ պան չըկա:

Թաքավորն ի, ուր վազիրի խաբրըներ ականջ անելու գյախ, կտիսնա որ էտա մարթ գյընա էկեր ի, կուզի մըտնել ներս, աման ուր խալայեղներ չեն թողնի: Ամր կանի ուր վազիրին, կասի. - Կընա էտա մարթուն ասա՝ թաքավոր կասի՝ հազըր կաց, վաղ հանսա կուգյամ:

Վազիրն ի, կերթա էտա մարթուն կասի. - Այ մա՛րթ, թակավոր կասի՝ հազըր կաց, վաղ հանսա կուգյամ ծեր տուն:

Մարթն ի, որ էսա խաբար կըլսի, ուրախ-ուրախ կթողնի կերթա ուր կնգյան կասի. - Կընի՛կ, թաքավորու վազիրն էկավ, զիկ ասաց՝ թաքավոր պարն կանի, կասի՝ հազըր կաց, որ վաղ կուգյամ ծեր չատըր տավաթ:

Թաքավորն ի, ուր վազիրին կասի. - Թադարյուքյ տեսեքյ, վաղ մեյ խատ երթանքյ էտա չիման ֆռանքյ, էն ծուռն էլ թող կիտրնա որ ուր խամար ինքյ կընացե, մեր յախեն կազատենքյ, զըմեն օր ըսըսկընա կուգյա, մեր տուտ վ'երդիս կառնի, կկայնի՝ կալապալըխ կանի, ամոթ ի:

Էն մեկել օր, թակավորն ի, խեստ ուր ասքյըրին էնան նազիր-վազիրներաց կինի ճանբախ, կերթա էտա չայիր-չիման տեղ կնըստի, էն տեղ որ էսա մարթ ուր չատըր զարկիր էր:

Էսա մարթն ի, որ կտիսնա, թե թաքավոր ուր նազիր-վազիրներով էկավ, կէլնի կուգյա, կկայնի թաքավորու առճև թամանդեմ կթալի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, տյու խեստ քյո ասքյըրին էնան նազիր-վազիրներաց պարով եքյ իկե, խազար պարով, վեր իմ աչիչ, վեր իմ

գյուլխուն: Ամր արա քյո ասքյորներաց էնան նազիր-վազիրներաց, որ բիթուն մեյտեղ սորայով պյուլոր նըստեն որ ես խաց պարզեմ, գյինի խըմենքյ, քյեֆ անենքյ:

Թաքավորն ի,որ էսա պան կլըսի, քյեֆ կուգյա, մեյ խատ կծըծղա, ամր կանի, որ ուր նազիր-վազիրներ էնան ասքյար մեյ սորա պյուլոր նըստին:

Թաքավորու նազիր-վազիրներ էնան ասքյորներ բիթուն էլ կուգյան, մեյտեղ պյուլոր կնըստին:

Էսա մարթն ի, կէրթա ուր չատորի տրկանց կառնի ուր սուֆրեն էնան ճրպոտ, կուգյա կկայնի էտա պյուլորի օրթեն, սուֆրեն կտրնի գյետին: Խեստ որ էսա պան թաքավոր էնան ուր նազիր-վազիրներ կտիսնան, խեստ ասքյորին բիթուն մեյտեղ կծրծղան, ծատ կզարկին:

Մարթն ի, մեյ խատ ուր ծեռաց ճրպոտ կզարկի վեր էսա սուֆրին, կասի. - Սուֆրայե Տամբ-տամբ, ես քյեզնից կուզիմ, տյու՝ աստրծուց, ըսկում պացվիս, որ ճոթերտ մեյ-մեկ թիզ էլ էսա մարթեր քյաշեն վեր ուրենց ծընգյոներաց, որ կիրակուր ուտելու գյախ չթափեն վեր ուրենց:

Սուֆրեն ի, վեր մարթու էսա խաբրին ըսկում կպացվի, ըսկում կպացվի, որ զըմեն մարթ մեյ թիզ կադար էլ կառնի վեր ուր ծընգյոներաց: Վեր սուֆրեն էլ ինչ-որ աստված ըստեղծեր ի, խազարանմուշ անուշ կերակուրներ, խեստ կարմիր գինուն լըցուկ ի:

Թաքավոր էնան ուր նազիր-վազիրն են, որ էսա պան կտիսնան՝ կզարմանան, պերաբտեր կմընա պաց:

Էսա մարթն ի, կդառնա թաքավորուն կասի. - Թաքավոր ապրած կենաս, հրամմե, անուշ արեքյ, թե որ պամ'էլ պակասութեն կա, ծե գյեորա չի, պան չըկա, աչք կոծեք:

Թաքավորն ի, կիրիշկա որ ի՞նչ. կիրակուրի քյասեքյ, գյինու կոտկըներ, բիթուն ոսկի ին, ակնունքյ-ջավաեիրներով նըխշուկ, ծեն կկըտրի, կբաշլայեն խաց ուտել, գյինի խըմել:

Էսա մարթն ի, որ կտիսնա, թե բիթուն էլ կերան-խըման կշտացան, ուր ճրպոտ կառնի, մեյ խատ կզարկի վեր էսա սուֆրին, կասի.

- Սուֆրայե Տամբ-տամբ, ես քյեզնից շյուքյր եմ, տյու՝ դաարրծուց:

Սուֆրեն ի, մարթու էսա խաբրի վերեն կծալվի, վերվի թարթախըմներն էլ կկուրիսվին:

Թաքավորն ի, որ էսա պան կտիսնա, տահա շատ կզարմանա: Ամր կանի ուր վազիրին, կասի. - Էտա սուֆրեն էտա մարթու ծեռնից առ, պե տու զիկ, էն սուֆրեն որ կա՝ թաքավորավայել պան ի:

Վազիրն ի, կէրթա մեյ խատ կտրվի մեչ էսա մարթու գյուլխուն, սուֆրեն ծեռնից կառնի, կպիրի կուրա թաքավորուն:

Էսա մարթն ի, կէրթա կկայնի թաքավորու առճն, կասի. - Թաքավոր ապրած կենաս, ես խեղճ մարթմ'եմ, արե մ'անի զալըմութեն, իմ սուֆրեն տու զիկ, ես էրթամ, խեղճ եմ, մեղքյ եմ:

Թաքավորն ի, կասի. - Դե ջայենամ էլի, շան որդի, էսա սուֆրեն որ կա՝ թաքավորավայել պան ի, տյու ի՞նչ անիս:

Մարթն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, էսա կանդար աշխար, էսա կանդար քյեռշկ-սարեն, ոսկիքյ-առծըթներ քյոն ի, չի՞ս կշտանա, որ աչքյ տըրեսյիր աղքըտի մեյ կրտոր խասյին. արե մ'անի մունաթեն, իմ սուֆրեն տու, ես էրթամ խետ իմ պանին:

Թաքավորն ի, որ էսա խաբըրներ կլըսի, շատ կպարկանա, կասի. - Թե որ չիս ուզե, որ քյո վիզ կրտրեմ, իմ առճըվանց տաֆ էլի, կընա խետ պանիպ:

Մարթն ի, կասի. - Թաքավոր ապրած կենաս, զոռովեն քյո բալեն մի կպուցի զիկ, խեղճ իս, իսքյի քաղցրութնով կասիմ՝ իմ սուֆրեն տու, ես էրթամ, մեկել զիկ ազիաթ մի տուս, զիկ էլ աղեկ չի, քյե էլ աղեկ չի:

Թաքավորն ի, որ էսա կլըսի, ամր կանի ուր խալայեղներաց, որ էսա մարթուն տըրվելով տանեն էն դեխ:

Թաքավորու խալայեղներն ին, համան կխասնին էսա մարթուն, տրվելով, կմըլըշկեն, կտանեն մեյ դեխ:

Էսա մարթն ի, կէլնի կէրթա կպառկի ուր չատրրի տակ, կասի. «Աղեկ, թաքավո՛ր, չասես՝ չասաց. ես ըսկուն թաքավորմ կշինիմ քյե, որ թաքավորմ էլ քյեզնից էլնի, տյու քյանի՞ գյըլյսեն ես, որ իմ սուֆրեն կխըլես»:

Թաքավորն ի, չուր իրիկվան դեխ էտա տեղ քեֆ անելուց սորա խետ ուր նազիր-վազիրներաց էնան ասքյըրին կէլնի կէրթա ուր քյեռշկ-սարեն:

Էն մեկել առատուն էսա մարթն ի, կէրթա թաքավորու քյեռշկ-սարի տակ, կտիսնա որ թաքավոր նըստե ուր քյեռշկ-սարի փենջարեն: Խետ որ թաքավորուն կտիսնա կբոռա, կասի. - Էյ թաքավո՛ր, չասի՞ս թե նամարդութեն արաց, գյեռ մըկավութ քյե կասեմ, հազըրվի, իրեքյ օրից սորա խետ քյե կըռիվ ունիմ:

Թաքավորն ի, որ էսապան կլսի՝ մեյ խատ կծըծղա: Էսա մարթն ի, կթողնի կէրթա ուր չատրրի տակ: Իրեքյ օրից սորա կուգյա, կտիսնա որ թաքավոր նըստեր ի ուր քյեռշկ-սարի փենջարեն, կբոռա, կասի.

- Թաքավոր ապրած կենաս, կայլոն քյաշելու գյախ չի, հազըրվի, իրեքյ սըհաթից սորա խետ քյե կըռիվ ունեմ:

Մարթն ի, կթողնի կէրթա, ուր էլած-չէլած կառնի, կպանցրանա վեր մեյ խատ դարիմ, փոս կփորի, կմըտնի մեչ էտա փոսին: Մեյ խատ ուր տըղմի պոչ կէօլեորի, խետ ուր տըղմի պոչ կէօլեորի, սար-քյար ան ասքյըրով կլըցվեն, բիթուն էլ սև՝ ծիյավոր:

Մարթն ի, ամր կանի՝ էտա սև ասքյըրին կասի. - Ծեզնից կուզեմ որ ինչ թաքավորու ասքյար որ ծե ռաստ կուգյա, բիթունին էլ ճարտեքյ:

Էսա սև ասքյըրներն ին, հյուջյում կանին վեր թաքավորու ասքյըրին կբաշլայեն ճարտել, արուն կէլնի խըղեղի պես կէրթա:

Խաբար կտասեն թաքավորուն, կասեն. - Թաքավոր ապրած կենաս, մեր սար-քյար սև ասքյար պըռներ ի, էլ քյե ասքյար չմընաց, բիթունին ճարտեցին: Էսա սև ասքյըրներն էլ, մարթ չի խասկընա ինչ տեսակ պան ին, քամու պես ծիյանքյ կբըշեն էսա գյըլեռխ՝ կճարտեն, կբըշեն

էնա գյուլեռխ՝ կճարտեն, ուրենցից չհուր մըկա մեյ խատ բիլաւ չի ըսպանվե: Մարթ չի խասկընա իսոնց պան, տյու կասիս թե վեր իսոնց թուր չի պանի:

Թաքավորն ի, որ էսա պան կլըսի, ուր կաւտրմներ կթյուլնա, կէլնի ուր փենջարեն, կիրիշկա որ տիսնա խենքյ էսա ի՞նչ ասքյար ին:

Մարթն ի, ուր դարի վերվեն կտիսնա որ թաքավոր էլեր ի փենջարեն կիրիշկա, կդառնա ուր դընգյին կասի. - Դընգյո՛, հա՞յ դընգյո, կտիսնա՞ս թաքավոր գյեռ փենջարեն կայներ ի, մեչ աշխըրիս ես էնրից զատ ուրիշ տյուշման չունիմ, էն ի իմ սուֆրեն խըլե, Դընգյո՛, քյե տիսնամ, պոչըտ գյետին, գյուլոխտ մեչ թաքավորու գյուլխուն:

Դընգյընն ի, ուր տերոչ խաբրի վերեն սըխկ հա՞յ տըխկ, կէրթա կպասնցրանա, մեյ խատ ըսկում սարտիլի կզարկի մեչ թակավորու գյուլխուն որ ըղեղ-մըղեղ բիթիուն կցըվրի, թակավոր կինի մեչ էօդեն, կմեռնի:

Էսա մարթն ի, որ կտիսնա թակավոր մեռավ, ուր դընգյն էլ էկավ մոտ զինքյ, տրդմի պոչ կէօլեորի դեխ ծախ, բիրդան բիթուն ասքյրներ կկուրիսվեն:

Էսա մարթն ի, դընգյ կտընի վեր թևին, տրդում կտընի կընգյան տեշ, կէլնի կէրթա թաքավորու քյեռշկ-սարեն:

Թաքավորու վազիրն ի, կտիսնա թե էսա մարթն էկավ, կխասնի զինք կթալի վեր էսա մարթու ոտաց, կասի. - Մենքյ քյե մեղա, մեր թաքավոր զաթի մեռավ, արե էլի մե թաքավոր:

Նոր էսա մարթուն կտանեն թաքավորու քյեռշկ-սարեն, կանեն ուրենց թաքավոր: